

**Հ. Մ. Ը. Մ.**

**Արեւելեան Միացեալ Նահանգներու  
Շրջանի**



**Սկառուտական Ներքին  
Ծրագիր – Կանոնագիր  
2022**

# ԾՐԱԳԻՐ

## ԱՆՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը անբաժան մասն է Միութեան ընդհանուր կառոյցին եւ անոր անդամները կը կոչուին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներ:

Ծանօթ.- Այս կանոնագիրին մէջ ՍԿԱՈՒՄՏ բառը կը վերաբերի հաւասարապէս տղոց եւ աղջկանց բաժիններուն:

## ՆՊԱՏԱԿ

Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտութեան նպատակն է՝

Ա. Պատրաստել ամուր նկարագրի եւ բարոյական բարձր արժանիքներու տեր, հաւատարմ եւ անձնուէր հայեր՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին ու նուիրուելու հայ ժողովուրդի ձգտումներու իրագործումին:

Բ. Պատրաստել առողջ, չարքաշ ու արի անհատներ:

Գ. Զօրացնել իրենց մտային կարողութիւնները:

Դ. Զարգացնել իրենց մէջ պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատուի գգացումները, ինչպէս նաեւ՝ վեհանձնութեան եւ զոհողութեան ոգին:

Ե. Արթնցնել համագործակցութեան, ծառայասիրութեան, ընկերասիրութեան ոգին, պատրաստելով տիպար բաղաբացիներ:

## ՄԻՋՈՑՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.ը կը կազմէ սկաուտական խումբեր հայրենիքի եւ գաղութներու մէջ՝ իրագործելու համար իր սկաուտութեան նպատակները:

- Սկաուտներու ազգային, քաղաքացիական, ընկերային, սկաուտական դաստիարակութեան եւ որակաւոր ու կարող աստիճանաւորներու պատրաստութեան համար կը կազմակերպուին դասախօսութիւններ, դպրոց-բանակումներ, դասընթացքներ, արշաւներ, բանակումներ եւ համագումարներ:

- Ծանօթացնելու համար սկաուտութիւնը եւ տարածելու համար անոր նպատակները՝

- Ա. Կը կազմակերպուին ծնողական հանդիպումներ, հրապարակային դասախօսութիւններ եւ ձեռնարկներ:

- Բ. Կը հրատարակուին գիրքեր եւ յօդուածներ՝ մամուլով:

- Գ. Յատուկ աշխատանք կը տարուի սկաուտութիւնը ծանօթացնելու հայ աշակերտութեան:

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 1 (ս.ը.կ. 144).- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտության կրնայ անդամակցիլ ամեն հայ անհատ՝ մասնակցելով իր սեռին եւ տարիքին համապատասխան բաժանմունքին:

ՅՕԴ. 2 (ս.ը.կ. 145).- Թեկնածուն սկաուտական կազմին անդամ կը դառնայ մասնաճիւղի Վարչութեան համաձայնութեամբ կամ անոր նշանակած Սկաուտական խորհուրդին հաստատումով:

ՅՕԴ. 3 (ս.ը.կ. 146).- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմի իւրաքանչիւր անդամ կը վճարէ անդամավճար, որ կը ճշդուի մասնաճիւղի Սկաուտական խորհուրդին կողմէ եւ կը հաստատուի Վարչութեան որոշումով:

ՅՕԴ. 4 (ս.ը.կ. 147).- Անդամակցիլ փափաքողը պէտք է ներկայացնէ գրաւոր դիմումագիր մը, իր բնակած վայրի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական խորհուրդին: 18 տարեկանէն փոքր անհատները պէտք է ունենան ծնողքին հաւանութիւնը հաստատող դիմումագիր մը, իսկ 18 տարեկան եւ ակտիվ տարիք ունեցող անհատները պարտին ունենալ երկու երաշխաւորներ:

Ծանօթ՝

ա) Յիշեալ երաշխաւորները պէտք է նուազագոյնը երկու տարուան Հ.Մ.Ը.Մ.ական անդամ եղած ըլլան եւ ամբողջացուցած՝ 18 տարիքը:

բ) Փորձառական ժամանակաշրջանէ մը ետք, նորագիրը կը կատարէ իր խոստումը կամ երդումը, այնուհետեւ դառնալով անդամ այդ մասնաճիւղին:

գ) Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմի անդամը չի կրնար մաս կազմել այլ սկաուտական խումբերու:

ՅՕԴ. 5 (ս.ը.կ. 148).- Խոստում կամ երդում կատարած նորագիրին կը տրուի անդամատետր՝ մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական խորհուրդին կնիքով եւ ստորագրութեամբ:

## ԲԱԺԱՆՈՒՆՔՆԵՐ

ՅՕԴ. 6 (ս.ը.կ. 149).- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ երեք բաժանմունքները՝

Մանչերու յատուկ

1. Գայլիկ (6-11)

2. Արի (12 եւ վեր)

3. Երեց (18 եւ վեր)

Ծանօթ՝

Աղջիկներու յատուկ

1. Արծուիկ (6-11)

2. Արեւոյշ (12 եւ վեր)

3. Պարմանուհի (18 եւ վեր)

ա) Այս բաժանմունքները կը կատարուին հիմք ունենալով տարիքը: Գայլիկ, արի, արծուիկ եւ արեւոյշ բաժանմունքները կարելի է ենթաբաժանմաներու ենթարկել՝ տարեկիցները համախմբելով:

բ) Այս բաժանմունքերը կարելի է պատշաճեցնել երկրի տեղական սկաուտական տարիքային դասաւորումներուն:

գ) Ըստ շրջաններու յարմարութեան, կրտսեր գայիկներն ու արծուիկները (3էն 6 տարեկան) կարելի համախմբել Նոյն խմբաւորումով՝ «Մոկլի» անունով: Մոկլիներու գործունեութիւնը ճշդէլի է Ներքին Կանոնագրութեամբ:

դ) (Ներքին կ.) 11 տարիքը լրացնող գայիկը կամ արծուիկը, արարողութեամբ մը կը փոխանցուի Արիական կամ Արենոյշական շարքերուն:

ե) (Ներքին կ.) 17 տարիքը լրացնող արին կամ արենոյշը, արարողութեամբ մը կը փոխանցուի Երեցի կամ Պարմանուհիի շարքերուն: Եթէ մասնաճիւղը ունի Երեցի կամ Պարմանի դրութիւն:

30Դ. 7 (ս.ը.կ. 150).- Սկաուտը, որ չի փափաքիր շարունակել սկաուտութիւնը, Կարչութեան հաստատումով կը փոխանցուի մասնաճիւղի անդամական ոչ-տարագաւոր շարքերուն:

Ծանօթ՝ (Ներքին կ.) Կարչութիւն եւ Սկաուտական Խորհուրդ կրնան ի հարկին, սկաուտական որեւէ մէկ պաշտօնի հրաւիրել Սկաուտ աստիճանաւորները:

30Դ. 8 (ս.ը.կ. 151).- 18 տարիքը ամբողջացուցած սկաուտը կրնայ մասնակցիլ մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին, Կանոնագրով ճշդուած բոլոր իրաւունքներով:

Ծանօթ՝ 16-18 տարեկան սկաուտը կրնայ մասնակցիլ մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին որպէս ունկնդիր:

## ԿԱՐԳԵՐ

30Դ. 9 (ս.ը.կ. 152).- Գ.Ս.Ը.Մ.ի Սկաուտութիւնը ունի հետեւեալ կարգերը, որոնք դաստիարակչական աշխատանքի հանգրուաններ են՝ հիմնուած սկաուտներու աստիճանաբար զարգացող մարմնային եւ մտային կարողութեանց վրայ՝

ա) Գայիկներ կամ Արծուիկներ

- 1.- Կակուղ Թաթիկ
- 2.- Միաստղ
- 3.- Երկաստղ

բ). Արիներ կամ Արենոյշներ

- 1.- Նորագիր
- 2.- Նորընծայ
- 3.- Երկրորդ կարգ - (Բ. կարգ)
- 4.- Առաջին կարգ - (Ա. կարգ)
- 5.- Վկայեալ կարգ

գ) Երեցներ եւ Պարմանուհիներ

- 1.- Նախապատրաստական շրջան
- 2.- Մարզումի շրջան
- 3.- Ընդհանուր ծառայութեան շրջան
- 4.- Վկայեալ կարգ

դ) Խմբապետներ եւ Խմբապետուհիներ

- 1.- Արարատեան կարգ

Ծանոթ 1.- Սկաուտական բոլոր կարգերն ու գիտելիքները կարելի է պատշաճեցնել երկրի տեղական պայմաններում, բացի Արարատեան կարգէն, որուն նախապայմանները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը եւ առ ի՛ գործադրութիւն կը յղէ զանոնք շրջաններուն:

Արարատեան կարգի պայմանները ամբողջացուցած անհատին անունը Շրջանային Վարչութեան կողմէ կը յղուի Կեդրոնական Վարչութեան՝ համապատասխան կարգը ստանալու համար:

Ծանոթ 2.- Սկաուտական շարքերու բոլոր անդամները կրնան WOOD BADGEի մասնագիտական քննութիւն անցնել իրենց բնակած երկրի ֆետերասիոնի կողմէ ճշդուած պայմաններով:

## **Պայմաններ**

Գայլիկական կամ սկաուտական կարգերը ունենալու համար անհրաժեշտ է լրացնել հետեւեալ պայմանները:

### **Ա. Կակուղ Թաթիկի Պարագային**

- 1.- Ենթական պետք է ըլլայ նուազագոյնը վեց տարեկան:
- 2.- Կատարած ըլլայ խոստումը եւ մաս կազմէ վիճակի (երամի) մը:
- 3.- Իւրացուցած ըլլայ Կակուղ Թաթիկի գիտելիքները:

### **Բ. Միաստղի Պարագային**

- 1.- Ստացած ըլլայ Կակուղ Թաթիկի վկայական:
- 2.- Իւրացուցած ըլլայ Միաստղի գիտելիքները:

### **Գ. Երկաստղի Պարագային**

- 1.- Ստացած ըլլայ Միաստղի վկայական:
- 2.- Իւրացուցած ըլլայ Երկաստղի գիտելիքները:

### **Դ. Նորագիրի Պարագային**

- 1.- Ենթական պետք է ըլլայ նուազագոյնը 12 տարեկան:
- 2.- Կրնայ փոխանցուած ըլլալ գայլիկութենէն/արծուկիկութենէն կամ դիմումագրով ընդունուած:
- 3.- Երեք ամսուայ ընթացքին հետեւի այս կարգի յատուկ ծրագրին եւ յաջողութեամբ անցնէ համապատասխան քննութիւնները:

### **Ե. Նորընծայի Պարագային**

- 1.- Պետք է ստացած ըլլայ Նորագիրի վկայական:
- 2.- Կատարած ըլլայ խոստումը:
- 3.- Նախընտրաբար տիրացած ըլլայ նուազագոյնը երկու մասնագիտական նշաններու (պէճ):
- 4.- Նուազագոյնը մէկ տարուան ընթացքին իւրացուցած ըլլայ Նորընծայի գիտելիքները եւ յաջողութեամբ անցնէ համապատասխան քննութիւնները:
- 5.- Վարչական եւ դաստիարակչական կարողութիւններով օժտուած Նորընծայ վկայեալը կրնայ ստանալ փոխ առաջնորդի աստիճան, առաջարկով իր խմբապետին, ապա մասնաճիւղի խմբապետի համաձայնութենէն ետք, կը վաւերացուի Սկաուտական խորհուրդին կողմէ: Ապա՝ մէկ տարի ծառայելէ ետք, կրնայ ստանալ Առաջնորդի աստիճան, առաջարկով իր խմբապետին, ապա մասնաճիւղի խմբապետի համաձայնութենէն ետք, կը վաւերացուի Սկաուտական խորհուրդին կողմէ:

2. Երկրորդ (Բ). Կարգի Պարագային

1.- Պետք է ստացած ըլլայ Նորընծայի վկայական:

2.- Մասնակցած ըլլայ բանակումի մը:

3.- Նախընտրաբար տիրացած ըլլայ նուազագոյնը հինգ մասնագիտական նշաններու (պէճ):

4.- Նուազագոյնը մէկ տարուան ընթացքին իւրացուցած ըլլայ Երկրորդ Կարգի գիտելիքները եւ յաջողութեամբ անցնէ համապատասխան քննութիւնները:

5.- Վարչական եւ դաստիարակչական կարողութիւններով օժտուած Երկրորդ Կարգի վկայեալը կրնայ ստանալ Վարիչ Առաջնորդի աստիճան, առաջարկով իր խմբապետին, ապա մասնաճիւղի խմբապետի համաձայնութենէն ետք, կը վաւերացուի Սկաուտական խորհուրդին կողմէ:

Ե. Առաջին (Ա.) Կարգի Պարագային

1.- Պետք է ստացած ըլլայ Երկրորդ Կարգի վկայական:

2.- Ստացած ըլլայ Առաջնորդի աստիճան:

3.- Մասնակցած ըլլայ նուազագոյնը երկու բանակումներու:

4.- Նախընտրաբար տիրացած ըլլայ նուազագոյնը տասը մասնագիտական նշաններու (պէճ):

5.- Իւրացուցած ըլլայ Առաջին Կարգի գիտելիքները եւ յաջողութեամբ անցնէ համապատասխան քննութիւնները:

6.- Վարչական եւ դաստիարակչական կարողութիւններով օժտուած Առաջին Կարգի վկայեալը կրնայ ստանալ Փոխ Խմբապետի աստիճան, մասնաճիւղի խմբապետին առաջարկով եւ Սկաուտական խորհուրդին վաւերացումով:

Ը. Վկայեալ Կարգի Պարագային

1.- Պետք է ստացած ըլլայ Առաջին Կարգի վկայական:

2.- Ստացած ըլլայ Վարիչ Առաջնորդի աստիճան, նուազագոյնը վեց ամիս առաջ:

3.- Նախընտրաբար մասնակցած ըլլայ նուազագոյնը հինգ բանակումներու:

4.- Իւրացուցած ըլլայ Վկայեալ Կարգի գործընթացը եւ յաջողութեամբ անցնէ համապատասխան քննութիւնները:

5.- Ունենայ օրինակելի ընթացք եւ փորձառութիւն՝ բոլոր մասնակցած կազմակերպական աշխատանքներու մէջ:

6.- Վարչական եւ դաստիարակչական կարողութիւններով օժտուած Վկայեալ Կարգի վկայեալը կրնայ ստանալ Խմբապետի աստիճան, մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի առաջարկով եւ Շրջանային Սկաուտական խորհուրդին վաւերացումով:

Թ. Երէցներու կամ Պարմանուհիներու Պարագային

Երէցներու եւ Պարմանուհիներու վկայականներու պայմանները կը ճշդուին Շրջանային Սկաուտական խորհուրդին կողմէ:

Ծանօթ` (Ներքին կ.)

1. Կակուղ Թաթիկ, Միաստղ, Երկաստղ, Նորագիր, Նորընծայ, Երկրորդ, եւ Առաջին Կարգերու գիտելիքներու սահմանումը կը հետեւի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հրատարակած դաստիարակչական գիրքերուն:

2. Կակուղ Թաթիկի, Միաստղի, Երկաստղի, Նորագիրի եւ Նորընծայի Կարգի վկայականները կը հաստատուին եւ կը վաւերացուին մասնաճիւղի Սկաուտական խորհուրդին կողմէ:

3. Երկրորդ Կարգի վկայականը կը հաստատուին եւ կը վաւերացուին մասնաճիւղի Սկաուտական խորհուրդին եւ մասնաճիւղի Վարչութեան կողմէ:

4. Առաջին Կարգի վկայականը կը հաստատուին եւ կը վաւերացուին Շրջանային Սկաուտական խորհուրդին կողմէ: Շրջանային Սկաուտական խորհուրդը կը պատրաստէ Առաջին Կարգի քննութիւնները, որ յարմարութեան համաձայն կարելի է տրամադրուի մասնաճիւղի խորհուրդի որպէսզի մատակարարէ թեկնածու սկաուտներու քննութիւնը: Այս

պարագային, լրացուած քննութիւնները կը փոխանցուին Շրջանային Սկաուտական խորհուրդին, որ պատասխանատու է հաստատել իւրաքանչիւր թեկնածու սկաուտի քննութեան արդիւնքը:

5. Վկայեալ Կարգի վկայականը կը հաստատուին եւ կը վաւերացուին Շրջանային Սկաուտական խորհուրդին եւ Շրջանային Վարչութեան կողմէ:

6. Արարատեան կարգը վերապահուած է Զ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

7. Արարատեան կարգը Զ.Մ.Ը.Մ.ի յատուկ տիտղոսն է: Այս կարգին յատուկ պայմաններն ու գիտելիքները կը ճշդուին Կեդրոնական Վարչութեան կողմէ: Սոյն տիտղոսը կը շնորհուի Կեդրոնական Վարչութեան մասնաւոր գրով:

8. Wood Badge (տախտակ պէճը) Միջազգային հանգամանք կը կրէ: Սկաուտական շարքերու բոլոր անդամները, Շրջանային Սկաուտական խորհուրդին հաւանութեամբ, կրնան Wood Badge-ի մասնագիտական քննութիւն անցնել իրենց բնակած նահանգի ֆետերատիոնի կողմէ ճշտուած պայմաններով:

## **ԽՈՍՏՈՒՄ, ԵՐԴՈՒՄ, ԴՎԻԱՆԱՆՔ, ՆՇԱՆԱԲԱՆ, ՆՇԱՆԱԿ**

ՅՕԴ. 10 (ս.ը.կ. 153).- Կակուղ Թաթիկի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած գայիկը կամ արծուիկը կը կատարէ հետեւեալ խոստումը՝

**«Կը խոստանամ ընել կարելիս՝ հաւատարիմ ըլլալու Աստուծոյ, Զայրենիքիս, ծնողքիս եւ վոհմակի (երամի) օրէնքին: Գործել բարիք մը ամէն օր»:**

Վոհմակի օրէնքն է՝

- 1.- Գայիկը մտիկ կ'ընէ Ծեր Գայլը:
- 2.- Գայիկը ինքզինքը մտիկ չ'ընէր:
- 3.- Գայիկը մաքուր հայերէն կը խօսի:

Երամի օրէնքն է՝

- 1.- Արծուիկը մտիկ կ'ընէ Արծիւը:
- 2.- Արծուիկը ինքզինք մտիկ չ'ընէր:
- 3.- Արծուիկը մաքուր հայերէն կը խօսի:

ՅՕԴ. 11 (ս.ը.կ. 154).- Նորագիրի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած արին կամ արենոյշը կը կատարէ հետեւեալ խոստումը.-

Զ.Մ.Ը.Մ.ի արիին խոստումը՝

**«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Ազգիս ու Զայրենիքիս:**

- Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի ու վեհանձն մարդ:

- Զնազանդիլ Զ.Մ.Ը.Մ.ի արիներու դաւանանքին»:

Զ.Մ.Ը.Մ.ի արենոյշին խոստումը՝

**«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Ազգիս ու Զայրենիքիս:**

- Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի ու վեհանձն մարդ:

- Զնազանդիլ Զ.Մ.Ը.Մ.ի արենոյշներու դաւանանքին»:

Զ.Մ.Ը.Մ.ի արիներու եւ արենոյշներու դաւանանքն է՝

- 1.- Արիին-Արենոյշին խօսքը նուիրական է:

- 2.- Արին-Արենոյշը հնագանդ է:
- 3.- Արին-Արենոյշը հաւատարիմ եւ ուղղամիտ է:
- 4.- Արին-Արենոյշը միշտ կ'օգնէ ուրիշին:
- 5.- Արին-Արենոյշը բարեկամ է բոլորին եւ եղբայր (քոյր) ուրիշ սկաւուտի՝ առանց ընկերային կարգի խտրութեան:
- 6.- Արին-Արենոյշը բարեկիրթ է:
- 7.- Արին-Արենոյշը մաքուր հայերէն կը խօսի ամէն ատեն եւ ամէն տեղ:
- 8.- Արին-Արենոյշը անասուններ եւ բոյսեր կը սիրէ եւ կը պաշտպանէ:
- 9.- Արին-Արենոյշը միշտ զուարթ եւ խանդավառ է:
- 10.- Արին-Արենոյշը աշխատասեր եւ կորովի է:
- 11.- Արին-Արենոյշը տնտեսող է:
- 12.- Արին-Արենոյշը մաքուր է մտածումով, խօսքով եւ գործով:

ՅՕԴ. 12 (ս.ը.կ. 155).- Նախապատրաստական շրջանի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած երեցը կամ պարմանուհին կը կատարէ հետեւեալ երդումը.-

«Կ'երդնում պատուոյս վրայ

- Հաւատարիմ մնալ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագրին եւ սկաւուտութեան սկզբունքներուն ու օրէնքներուն:

- Ծառայել Ազգիս, Հայրենիքիս եւ աշխատիլ հայ ժողովուրդի իրաւունքներուն իրագործման:

- Պայքարիլ այլասերման եւ ապագայնացման դէմ՝ պահպանելով հայ լեզուն, հայ մշակոյթը եւ ազգային նկարագիրը»:

ՅՕԴ. 13 (ս.ը.կ. 156).- Միջազգային Սկաւուտական Նշանաբանն է. «Միշտ Պատրաստ»: Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանն է. «Բաճրացի՛ր-Բարձրացո՛ւր»: Մոկլիինը՝ «Միշտ Ուրախ», Գայլիկինը եւ արծուիկինը՝ «Լաւագո՛յն», արիին եւ արեւոյշինը՝ «Միշտ Պատրաստ», երեցին եւ պարմանուհին՝ «Ծառայո՛ղ»:

ՅՕԴ. 14 (ս.ը.կ. 157).- Խոստում կամ երդում կատարած Հ.Մ.Ը.Մ.ի արին, արենոյշը, երեցը կամ պարմանուհին իր գլխարկին վրայ կը կրէ Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը եւ տարագին վրայ՝ սկաւուտական շուշանածաղիկը:



Հ.Մ.Ը.Մ.ի ՇՈՐՇԱՆԱԾԱՂԻԿԸ



Հ.Մ.Ը.Մ.ի ՆՇԱՆԱԿԸ

ՅՕԴ. 15 (ս.ը.կ. 158).- Նորագիրը խոստում կամ երդում կատարելէ ետք, իրաւունք կը ստանայ իր տարագին հետ կրելու փողկապ եւ գլխարկ ու մասնակցելու սկաւուտական պաշտօնական արարողութիւններուն:

## ԴՐՕՇԱԿՆԵՐ

ՅՕԴ. 16 (ս.ը.կ. 159).- Իւրաքանչիւր մասնաճիւղի սկաւուտական կազմը կ'ունենայ իր դրօշակը՝ նման Հ.Մ.Ը.Մ.ի սկաւուտական դրօշին 120 սմ. x 90 սմ. Մեծութեամբ, մասնաճիւղին գոյնով, որ կը ճշդուի Ծրջանային Վարչութեան կողմէ: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին անունը, հայերէնով եւ բնակած երկրին լեզուով:



ՅՕԴ. 17 (ս.ը.կ. 160).- Սկառուտական իրաքանչիւր բաժանմունք կ'ունենայ իր դրօշակը՝ 90 սմ. x 67 սմ. մեծութեամբ, մասնաճիւղին գոյնով: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին անունը եւ բաժանմունքին թիւը կամ անունը հայերէնով եւ բնական լեզուով:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

ՅՕԴ. 18 (ս.ը.կ. 161).- Զ.Մ.Ը.Մ.ի Սկառուտութիւնը ունի հետեւեալ վարչական բաժանումները.-

### Ա.- ՄԱՐՄԻՆՆԵՐ

- ա) Շրջանային Սկառուտական խորհուրդ
- բ) Մեկուսի Շրջանի Սկառուտական խորհուրդ
- գ) Մասնաճիւղի Սկառուտական խորհուրդ:

### Բ.- ԺՈՂՈՎՆԵՐ

- ա) Զամա-Զ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Զամագումար
- բ) Մասնաճիւղերու խմբապետներու Ընդհանուր ժողով:

## ՄԱՐՄԻՆՆԵՐ

### ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍՎԱՌՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

#### ԿԱԶՄ

ՅՕԴ. 19 (ս.ը.կ. 162).- Զ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկառուտական խորհուրդը կը նշանակուի Զ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունեութեան ժամանակաշրջանի տնտղութեան:

ՅՕԴ. 20 (ս.ը.կ. 163).- Շրջանային Սկառուտական խորհուրդը կը բաղկանայ սկառուտական գործերու լաւատեղեակ 5-7-9-11 Զ.Մ.Ը.Մ.ականներէ: Այս թիւին մաս կը կազմեն Շրջանային Ընդհանուր խմբապետը կամ խմբապետուհին, Շրջանային խմբապետը եւ Շրջանային խմբապետուհին:

Ծանօթ.- (Ներքին կ.) Կանոնագրով յիշուած տարազաւորներէն բացի, տարազաւոր մը խորհուրդի անդամ նշանակուելէ ետք, մինչեւ իր շրջանի աւարտը կը դադրի սկառուտական տարազաւորի հանգամանքէն:

ՅՕԴ. 21 (ս.ը.կ. 164).- Շրջանային Սկառուտական խորհուրդը կը կազմէ իր դիւանը (Տարազաւորը մաս չի կազմեր դիւանին):

ՅՕԴ. 22 (ս.ը.կ. 165).- Շրջանային Վարչութեան սկառուտական ներկայացուցիչը ի պաշտօնէ կը մասնակցի Շրջանային Սկառուտական խորհուրդի ժողովներուն:

ՅՕԴ. 23 (ս.ը.կ. 166).- Շրջանային Սկառուտական խորհուրդի անդամներուն թիւը եւ նստավայրը կը ճշդէ Շրջանային Վարչութիւնը:

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

307. 24 (ս.ը.կ. 167).- Շրջանային սկաուտական խորհուրդը կը պատրաստէ իր գործունեութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան՝ առ ի վաւերացում:

307. 25.- Շրջանային սկաուտական խորհուրդը, իւրաքանչիւր շրջանի սկաուտական բարձրագոյն մարմինն է: Կը վարէ շրջանի սկաուտական ընդհանուր աշխատանքները, կը հսկէ շրջանի սկաուտական գործունեութիւններուն, համաձայն սկաուտական Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի որոշումներուն:

ա.- Կը կազմակերպէ մասնաճիւղերու սկաուտական խորհուրդներու խորհրդատուութիւն տարեկան հերթականութեամբ:

բ.- Կը հրահրէ խմբապետները մասնաճիւղերու խմբապետական ընդհանուր Ժողովի: Կ'ուսումնասիրէ յիշեալ Ժողովին կողմէ յղուած առաջարկները եւ ի հարկին ընթացք կուտայ անոնց:

գ.- Կը կազմակերպէ՝

- Միջ-մասնաճիւղային բանակումներ

- սկաուտական կարգերու դասընթացքներ

դ.- Զարկ եղած պարագային կը յառաջացնէ դաստիարակչական յանձնախումբ, որ զբաղի վկայեալ կարգի սկաուտ պատրաստելու աշխատանքով:

ե.- Ի պահանջեալ հարկին դասախօսներ կ'ապահովէ մասնաճիւղերուն:

զ.- Կ'արտօնէ եւ կը համարդէ միատեղ գործունեութիւն, շրջանի մասնաճիւղերուն

միջեւ:

է.- Կը պատրաստէ մասնագիտական նշաններու տուչութեան պայմանները եւ կը կազմակերպէ համապատասխան դասընթացքներ:

ը.- Կը քաջալերէ արժանաւոր սկաուտներու մասնակցութիւնը համաշխարհային եւ Զամա-Յ.Մ.Ը.Մ.ական բանակումներու:

307. 26 (ս.ը.կ. 168).- Շրջանային սկաուտական խորհուրդը կը վարէ շրջանի սկաուտական ընդհանուր աշխատանքները, կը հսկէ շրջանի սկաուտական գործունեութիւններուն, համաձայն սկաուտական Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի որոշումներուն:

307. 27 (ս.ը.կ. 169).- Շրջանային սկաուտական խորհուրդը կը գումարէ հերթական Ժողովներ: Նիստերու վաւերացուած ատենագրութիւններու պատճէնը կը փոխանցէ Շրջանային Վարչութեան:

307. 28 (ս.ը.կ. 170).- Շրջանային սկաուտական խորհուրդը կրնայ հրատարակել սկաուտական թերթ, կամ սկաուտական գիրքեր, Շրջանային Վարչութեան հաւանութեամբ եւ Կեդրոնական Վարչութեան արտօնութեամբ:

307. 29.- Շրջանային սկաուտական խորհուրդը իր աշխատանքներու իրագործումը դիւրացնելու նպատակաւ կարող է նշանակել յանձնախումբեր իր անմիջական հսկողութեամբ: Սոյն յանձնախումբերը կը դադրին Շրջանային խորհուրդի ժամանակաշրջանի աւարտին:

## ԻՐԱՎԱՍՈՒԹԻՒՆ

307. 30 (ս.ը.կ. 171).- Շրջանային սկաուտական խորհուրդէն ներկայացուցիչ մը խորհրդակցական ձայնով կը մասնակցի Զ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին:

307. 31 (ս.ը.կ. 172).- Շրջանային սկաուտական խորհուրդը մասնաճիւղերու Վարչութիւններուն հետ իր թղթակցութիւնները կը կատարէ Շրջանային Վարչութեան միջոցաւ:

## **ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԻՒՆ**

30Դ. 32 (ս.ը.կ. 173).- Շրջանային Սկաուտական խորհուրդը ի պահանջեալ հարկին կը գործէ իր գտնուած երկրի սկաուտական կանոնագրութեան տրամադրութեանց համաձայն:

30Դ. 33.- Շրջանային Սկաուտական խորհուրդի ներկայացուցիչները, կրնան խորհրդակցական ծայնով մասնակցիլ մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի ժողովներուն:

30Դ. 34 (ս.ը.կ. 174).- Շրջանային Սկաուտական խորհուրդը երկրէն դուրս բանակում, արշաւ, շրջապտոյտ, դասընթացք կազմակերպելու պարագային, պարտի Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան արտօնութիւնը առնել, գործնական քայլերու դիմել՝ առաջ: Ապա ձեռնարկի աւարտին պարտի գրաւոր տեղեկագիր (բարոյական եւ նիւթական) ներկայացնել Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան:

30Դ. 35 (ս.ը.կ. 175).- Շրջանային Սկաուտական խորհուրդը իր հաշիւները կը պահէ կանոնաւոր եւ օրինաւոր հաշուական տոմարներով:

Իր գործունէութեան աւարտին նիւթաբարոյական տեղեկագիրը կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան:

30Դ. 36 (ս.ը.կ. 176).- Շրջանային ներկայացուցչական ժողովը կը ճշդէ Շրջանային Սկաուտական խորհուրդի նիւթական պիւտճէն, զոր կը հայայայթէ Շրջանային Վարչութիւնը:

30Դ. 37 (ս.ը.կ. 177).- Շրջանային Վարչութենէն Շրջանային Սկաուտական խորհուրդ նիւթական փոխանցումները կը կատարուին Շրջանային Սկաուտական խորհուրդի ներկայացուցած նախահաշիւներու հիման վրայ, իւրաքանչիւր գլուխի համար առանձին:

## **ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

30Դ. 38 (ս.ը.կ. 178).- Մեկուսի Շրջանի Սկաուտական խորհուրդի կազմը, պարտականութիւնը, պարտաւորութիւնն ու իրաւասութիւնը կը նոյննայ Շրջանային Սկաուտական խորհուրդին սահմանած յօդուածներու հասկացողութեամբ:

Ծանօթ՝ Այս կանոնագրութեամբ՝ այն բոլոր յօդուածներուն մէջ, ուր արձանագրուած է Շրջանային Սկաուտական խորհուրդի անուանումը կը համապատասխանէ նաեւ Մեկուսի Շրջաններու Սկաուտական խորհուրդներուն:

## **ՄԱՆԱԳՐՈՒՄԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

### **ԿԱԶՄ**

30Դ. 39 (ս.ը.կ. 179).- Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի նշանակել Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդ, որուն կազմը, պարտականութիւնը, պարտաւորութիւնն ու իրաւասութիւնը կը ճշդուին իր շրջանի ներքին Կանոնագրութեամբ:

30Դ. 40.- Իւրաքանչիւր մասնաճիւղի վարչութիւն, կը նշանակէ իր մասնաճիւղի սկաուտական խորհուրդը, որ կը գործէ մասնաճիւղի Վարչութեան ժամանակաշրջանի տեղողութեան:

30Դ. 41.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը կը բաղկանայ սկաուտական գաղափարաբանութեան ծանօթ, 5-7-9-11 Գ.Մ.Ը.Մ.ականներէ: Այս թիւին մաս կը կազմեն մասնաճիւղի սմբապետ/ուհին:

Ծանօթ՝ Կանոնագրով յիշուած տարազաւորներէն բացի, տարազաւոր մը խորհուրդի անդամ նշանակուելէ ետք, մինչեւ իր շրջանի աւարտը կը դադրի սկաուտական տարազաւորի հանգամանքէն:

30Դ. 42.- Սկաուտական խորհուրդի անդամներուն թիւը կը ճշդուի մասնաճիւղի վարչութեան կողմէ:

30Դ. 43.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը, իւրաքանչիւր մասնաճիւղի սկաուտական բարձրագոյն մարմինն է:

30Դ. 44.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը համարատու է մասնաճիւղի վարչութեան, իսկ Սկաուտական ծիրին մէջ կը գործէ Շրջանային Սկաուտական խորհուրդի հովանիին տակ:

30Դ. 45.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը կը կազմէ իր դիւանը: Տարազաւորը մաս չի կազմեր դիւանին:

30Դ. 46.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի ժողովներուն, ի պաշտօնէ, կը մասնակցի Մասնաճիւղի վարչութեան Սկաուտական Ներկայացուցիչը:

#### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

30Դ. 47.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը կը պատրաստէ իր գործունէութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Մասնաճիւղի Վարչութեան՝ առ ի վաւերացում:

30Դ. 48.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը՝  
ա.- Կը վարէ մասնաճիւղի սկաուտական ընդհանուր աշխատանքները:  
բ.- Կը վաւերացնէ աստիճաններու տուչութիւնները եւ կարգերու վկայանները, համաձայն Սկաուտական Ներքին Ծրագրի Կանոնագրի տրամադրութեանց:  
գ.- Կը հովանաւորէ փոխանցման, խոստումի եւ երդման արարողութիւնները:  
դ.- Պաշտօն կուտայ Աքելլայի, Միաւորի խմբապետի եւ խմբապետի:  
Ծանօթ՝ Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի գործունէութեան ժամանակաշրջանի աւարտին, եւ մինչեւ նոր Սկաուտական խորհուրդի նշանակումը, խմբապետական եւ աստիճանաւորական կազմը կը վարէ մասնաճիւղի սկաուտական ընթացիկ գործունէութիւնը:

30Դ. 49.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը իր աշխատանքներուն իրագործումը դիւրացնելու նպատակաւ, կ'առաջացնէ յանձնախումբեր: Սոյն յանձնախումբերը կը դադրին մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի ժամանակաշրջանի աւարտին:

30Դ. 50.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը կը գումարէ հերթական ժողովներ որուն առեւտագրութիւններու օրինակները կ'ուղարկուին մասնաճիւղի վարչութեան եւ Շրջանային Սկաուտական խորհուրդին:

30Դ. 51.- Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդը կը կազմակերպէ՝  
ա. Մասնաճիւղի տարեկան բանակումներ.  
բ. Աստիճանաւորական կազմերու պատրաստութեան նպատակին ծառայող գործունէութիւններ.  
գ. Տարեկան երդման Արարողութիւններ.  
դ. Արշակներ.  
ե. Դասախօսութիւններ.  
զ. Կը տօնէ ազգային, ժողովրդական տօներ եւ ամանդութիւններ.

է. Սկառուական գործունեությանց ներկայացնող ցուցադրական ելոյթներ.  
ը. Սկառուական նորագիր, նորընծայ կարգերու քննութիւններ.  
թ. Կը մասնակցի նպաստալի ձեռնարկներու կազմակերպուած Ամերիկեան  
Սկառուական Կազմակերպութեանց եւ ազգային մարմիններու կողմէ:  
ժ. Մասնագիտական նշաններու դասարաններ եւ քննութիւններ.

#### **ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՅՕԴ. 52.- Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդը պաշտօնապէս կը դիմէ եւ կ'արձանագրուի իր նահանգի Ամերիկեան Սկառուական Կազմակերպութեան Սկառուական Մարմին: Ամէն տարի կը նորոգէ իր անդամագրութիւնը եւ սկառուտներու ապահովագրութիւնը յիշեալ մարմնի միջոցաւ:

ՅՕԴ. 53.- Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդը պարտի իր գործունեութեան ընթացքի փոփոխութիւնները պաշտօնական խողովակով փոխանցել մասնաճիւղի վարչութեան եւ Շրջանային Սկառուական Խորհուրդին:

ՅՕԴ. 54.- Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդը իր նահանգէն կամ շրջանէն դուրս որբէն ընդհանրական բնոյթ կրող ձեռնարկի մասնակցելու համար պէտք է ապահովէ՝  
ա. Մասնաճիւղի Վարչութեան արտօնութիւնը.  
բ. Շրջանային Սկառուական Խորհուրդի հաստատումը եւ Շրջանային Վարչութեան վաւերացումը:

ՅՕԴ. 55.- Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդը իր տարեշրջանի աւարտին պէտք է ներկայացնէ իր նիւթաբարոյական գործունեութեան տեղեկագիրը մասնաճիւղի վարչութեան: Սոյն տեղեկագրի մէկ օրինակը կ'ուղարկէ Շրջանային Սկառուական Խորհուրդին:

ՅՕԴ. 56.- Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդը պարտի պահել օրինաւոր եւ կանոնաւոր հաշուական տոմարներ համաձայն մասնաճիւղի հաշուապահական-գանձապահական ուղեգիծի:

ՅՕԴ. 57.- Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդը կ'ունենայ իր կնիքը, մակագրուած թուղթը եւ ծրարը:

## **ԺՈՂՈՎՆԵՐ**

### **ՀԱՄԱ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

ՅՕԴ. 58 (ս.ը.կ. 180).- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Խմբապետական Համագումարը կը կայանայ նուազագոյնը չորս տարին անգամ մը, զայն կը կազմակերպէ եւ կը հովանաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

ՅՕԴ. 59 (ս.ը.կ. 181).- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Խմբապետական Համագումարին կը մասնակցին Շրջանային Ընդհանուր Խմբապետները/Խմբապետուհիները եւ Շրջանային Խմբապետներն ու Խմբապետուհիները, որոնց չգոյութեան պարագային՝ Շրջանի բարձրագոյն պաշտօն ունեցող խմբապետը եւ խմբապետուհին: Մեկուսի շրջաններու պարագային կը մասնակցին աղջկանց եւ տղոց բարձրագոյն պաշտօն ունեցող ներկայացուցիչները:

Ծանօթ.- Ի պահանջեալ հարկին Կեդրոնական Վարչութիւնը կը հրակիթ անցեալի վաստակաւոր խմբապետ/ուհիներ:

ՅՕԴ. 60 (ս.ը.կ. 182).- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական հմբապետական Համագումարը՝

ա) Կը լսէ իրաքանչիւր Շրջանի սկաուտական գործունէութեան մասին ամփոփ տեղեկագիր՝ առ ի տեղեկութիւն:

բ) Կ'ուսումնասիրէ տեղեկագրերու լոյսին տակ՝ Շրջաններու եւ Սեկուսի Շրջաններու սկաուտական մասնագիտական հարցերը եւ կը թելադրէ գործունէութեան ուղեգիծ:

գ) Կը զբաղի սկաուտական մասնագիտական հարցերով, ազգային դաստիարակչական գիտելիքներով, գործնական աշխատանքներով, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու ծրագրումով եւ այլն:

դ) Կը մշակէ սկաուտական ընդհանուր գործունէութեան ուղեգիծ:

ե) Կրկայ Սկաուտական Ընդհանուր Կանոնագիրին վերաբերեալ, բարեփոխութեան առաջարկներ բանաձեւել:

զ) Իր եզրակացութիւնները, առաջարկներն ու թելադրանքները կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան:

ՅՕԴ. 61 (ս.ը.կ. 183).- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական հմբապետական Համագումարը չի կրնար զբաղիլ Միութեան վարչական, կազմակերպչական եւ կանոնագրային հարցերով:

### **ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

ՅՕԴ. 62 (ս.ը.կ. 184).- Մասնաճիւղերու հմբապետներու Ընդհանուր ժողովը կը բաղկանայ Շրջանային Ընդհանուր հմբապետէն կամ հմբապետուհիէն, Շրջանային հմբապետէն ու հմբապետուհիէն, եւ մասնաճիւղերու հմբապետներէն կամ հմբապետուհիներէն:

ա) Հարկ եղած պարագային կը հրաւիրուին շրջանի գործօն հմբապետներ եւ հմբապետուհիներ:

բ) Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամները կրնան մասնակցիլ այս ժողովին:

գ) Ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ զայն կը փոխանցէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

դ) (Ներքին կ.) Շրջանային Սկաուտական Խորհուրդը նուազագոյնը տարին անգամ մը կը հրաւիրէ այս ժողովը:

ՅՕԴ. 63 (ս.ը.կ. 185).- Մասնաճիւղերու հմբապետներու Ընդհանուր ժողովը՝

ա) Կը լսէ մասնաճիւղերու գրաւոր ամփոփ զեկոյցները՝ սկաուտական գործունէութեան մասին:

բ) Կը քննէ սկաուտական մասնագիտական հարցեր եւ կը գտնէ համապատասխան լուծումներ՝ ջանալով բարելաւել մասնաճիւղերու գործունէութեան կարելիութիւնները:

գ) (Ներքին կ.) Յիշեալ ժողովի եզրակացութիւնները Շրջանային Սկաուտական Խորհուրդը յատուկ շրջաբերականով կը փոխանցէ մասնաճիւղերու Սկաուտական Խորհուրդներուն:

## **ՊԱՇՏՈՆՆԵՐ**

ՅՕԴ. 64 (ս.ը.կ. 186).- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերը ունին իրենց յատուկ սկաուտական հետեւեալ պաշտօնները՝

- 1.- Շրջանային Ընդհանուր հմբապետ/հմբապետուհի.
- 2.- Շրջանային հմբապետ եւ հմբապետուհի.
- 3.- Մասնաճիւղի հմբապետ/հմբապետուհի.
- 4.- Միաւորի հմբապետ եւ հմբապետուհի.

30Դ. 65 (ս.ը.կ. 187).- Վերոյիշեալ պաշտօններու (թիւ 1 եւ 2) գործունեութեանց ժամանակաշրջանը ճշդուած է Ընդհանուր կանոնագրութեամբ, իսկ թիւ 3 եւ 4 պաշտօններու ժամանակաշրջանը ճշդուած Ներքին Կանոնագրութեան մէջ:

30Դ. 66 (ս.ը.կ. 188).- Պաշտօն մը պետք է վաւերացուած ըլլայ Սկաուտական եւ Վարչական համապատասխան մարմիններու կողմէ:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ/ ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

30Դ. 67 (ս.ը.կ. 189).- Շրջանի մը սկաուտութեան ընդհանուր պետն է:

ա) Շրջանէն Ներս այս պաշտօնը կը հաստատուի երբ շրջանը ունենայ նուազագոյնը 500 սկաուտ եւ երեք մասնաճիւղ:

բ) Այն շրջանը որ չունի Շրջանային Խմբապետ եւ Խմբապետուհի, չի կրնար Շրջանային Ընդհանուր Խմբապետ/Խմբապետուհի ունենալ:

գ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ: Կը գործէ Շրջանային Վարչութեան գործունեութեան ժամանակաշրջանին:

դ) Կրնայ երկրորդ անգամ վերանշանակուիլ:

ե) Կրնայ մէկ շրջան դադարէ ետք վերանշանակուիլ, պայմանով որ չդադրեցնէ իր միութենական գործունեութիւնը:

**ՊԱՅՄԱՆՆԵՐ**

30Դ. 68 (ս.ը.կ. 190).- Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուհին պարտի նախապէս երկու տարի Շրջանային Խմբապետի կամ Խմբապետուհիի պաշտօն վարած ըլլալ: Ծանօթ՝ Նախընտրաբար ունենալ Արարատեան Կարգ եւ Wood Badge:

**ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆ**

30Դ. 69 (ս.ը.կ. 191).- Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուհին՝

ա) Կը հսկէ իր շրջանի սկաուտական ընդհանուր աշխատանքներուն:

բ) Կը մշակէ Շրջանային Խմբապետներու գործակցութեամբ՝ իր շրջանի սկաուտական շարժումին ընդհանուր ուղեգիծը:

գ) Կը վարէ մասնաճիւղերու Խմբապետներու ընդհանուր ժողովը:

դ) Կը վարէ սկաուտական ընդհանուր հանդիսութիւնները:

ե) Կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ժողովին իրաւասու ծայնով:

զ) Կը մասնակցի Համա-Հ.Մ.Բ.Ս.ական Խմբապետական Համագումարին՝ ի պաշտօնէ:

է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ խորհրդակցական ծայնով:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

30Դ. 70 (ս.ը.կ. 192).- ա) Շրջանային Խմբապետը գայլիկներու, արիներու եւ երեցներու պատասխանատու Խմբապետն է, իսկ Շրջանային Խմբապետուհին՝ արծուիկներու, արենոյշներու եւ պարմանուհիներու:

բ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունեութեան ժամանակաշրջանին:

գ) (Ներքին կ.) Կրնայ երկրորդ անգամ վերանշանակուիլ:

դ) (Ներքին կ.) Կրնայ մէկ շրջան դադարէ ետք վերանշանակուիլ, պայմանաւ որ չդադրեցնէ իր միութենական գործունեութիւնը:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 71.- Շրջանային հմբապետ/հմբապետուհին պարտի նախապես 2 տարի մասնաճիւղի հմբապետի/հմբապետուհիի պաշտօնը վարած ըլլայ:  
Ծանօթ.- Նախընտրաբար ունենալ Վկայեալ կարգ:

## ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

307. 72 (ս.ը.կ. 193).- Շրջանային հմբապետը կամ Շրջանային հմբապետուհին՝  
ա) Կը հսկէ մանչերու կամ աղջկանց բաժնի գործունեութիւններուն վրայ:  
բ) Կը յանձնէ բոլոր մասնաճիւղերէն ներս իր բաժնի համապատասխան հմբապետներու աստիճաններն ու պաշտօնները:  
գ) Կը վարէ իր թեւին յատուկ՝ ընդհանուր հանդիսութիւնները:  
դ) Կը մասնակցի Համա-Հ.Մ.Ը.Մ.ական հմբապետական Համագումարին՝ ի պաշտօնէ:  
ե) Կը մասնակցի Շրջանային Սկառուտական Խորհուրդի ժողովին՝ իրաւասու ձայնով:  
զ) Կը մասնակցի Մասնաճիւղերու հմբապետական Ընդհանուր ժողովին՝ ի պաշտօնէ:  
է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ Խորհրդակցական ձայնով:  
ը) (Ներքին կ.) Շրջանային Ընդհանուր հմբապետի պաշտօնի չգոյութեան պարագային, կը վարեն մասնաճիւղերու հմբապետներու ընդհանուր ժողովը:

## ՄԱՆԱԾԻՂԻ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒԳԻ

307. 73 (ս.ը.կ. 194).- Մասնաճիւղի մը սկառուտական բաժնի ընդհանուր պատասխանատուն է:  
Ծանօթ.- (Ներքին կ.) Իւրաքանչիւր մասնաճիւղ կ'ունենայ մէկ Մասնաճիւղի հմբապետ կամ Մասնաճիւղի հմբապետուհի:

307. 74 (ս.ը.կ. 195).- Մասնաճիւղի հմբապետ/հմբապետուհին կը Նշանակուի մասնաճիւղի վարչութեան կողմէ՝ համախորհուրդ Շրջանային Սկառուտական Խորհուրդին:

307. 75 (ս.ը.կ. 196).- Կը գործէ մասնաճիւղի Վարչութեան գործունեութեան ժամանակաշրջանին:  
(Ներքին կ.) Կրնայ երկրորդ անգամ վերանշանակուիլ: Կրնայ մէկ շրջան դադարէ ետք վերանշանակուիլ, պայմանաւ որ չդադրեցնէ իր միութեանական գործունեութիւնը:

307. 76 (ս.ը.կ. 197).- Մասնաճիւղի հմբապետին Նշանակումի պայմանները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին շրջաններու կամ Մեկուսի շրջաններու Սկառուտական Ներքին Կանոնագրութեամբ:

## 307. 77.-

### Ա1.- Պայմաններ

ա.- Պարտի ունենալ հմբապետի աստիճան:

բ.- Նախընտրաբար ունենալ Վկայեալ կարգ:

գ.- Նախընտրելի է, որ մէկ տարի Միաւորի հմբապետի, կամ երկու տարի խումբի հմբապետի պաշտօն վարած ըլլայ:

Ա2.- Պարտաւորութիւններ եւ Իրաւասութիւններ

Մասնաճիւղի հմբապետը կամ հմբապետուհին՝

ա.- Կը գործադրէ մասնաճիւղի Սկառուտական Խորհուրդի որոշումները:

բ.- Կը վարէ մասնաճիւղի հմբապետական/աստիճանաւորական ժողովները:

գ.- Կը վարէ մասնաճիւղի Սկառուտական հանդիսութիւնները:



դ.- Կը մասնակցի մասնաճիւղերու ընդհանուր խմբապետական ժողովին՝ ի պաշտօնէ:

ե.- Կը հովանաւորէ սկաուտական խոստման եւ երդման արարողութիւնները:

զ.- Կ'առաջարկէ փոխ առաջնորդի, առաջնորդի, վարիչ առաջնորդի եւ փոխ խմբապետի աստիճանները:

է.- Կը յանձնէ իր մասնաճիւղի մինչեւ Բ. կարգ (ներառեալ) վկայականները եւ անոնց համապատասխան (փոխ առաջնորդի, առաջնորդի, վարիչ առաջնորդի եւ փոխ խմբապետի) աստիճանները:

#### **ՄԻԱԲՈՐԻ ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

ՅՕԴ. 78 (ս.ը.կ. 198).- Մասնաճիւղի սկաուտական միաւորները կ'ունենան Միաւորի խմբապետ եւ խմբապետուհի, որուն նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին Շրջաններու կամ Մեկուսի Շրջաններու Սկաուտական Ներքին Կանոնագրութեամբ:

ՅՕԴ. 79.- Միաւորի խմբապետ/ուհին կը նշանակուի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կողմէ մասնաճիւղի վարչութեան հաւանութեամբ եւ կը գործէ անոր գործունեութեան ժամանակաշրջանին: Կրնայ յաջորդաբար վերանշանակուի վարչութիւններու ընտրութեամբ:

ՅՕԴ. 80.- Պայմաններ

ա.- Պարտի ունենալ խմբապետի աստիճան:

բ.- Նախընտրաբար ունենալ Վկայեալ կարգ:

գ.- Նախընտրելի է, որ մէկ տարի խումբի խմբապետի պաշտօն վարած ըլլայ:

ՅՕԴ. 81.- Պարտաւորութիւններ եւ Իրաւասութիւններ

ա.- Միաւորի խմբապետը պատասխատուն է իր միաւորին ու կը հսկէ անոր գործունեութեան:

բ.- Կը մասնակցի մասնաճիւղի խմբապետական ժողովին:

գ.- Կը վարէ միաւորի խմբապետական/աստիճանաւորական ժողովները:

# ԱՍՏԻՃԱՆԱԿԻՈՐԱԿԱՆ ԿԱԶՄ

ՅՕԴ. 82 (ս.ը.կ. 199).- Սկառուտական շարքերը կ'ունենան հետեւեալ աստիճանաւորական կազմերը, որոնք իրենց կարողութեան եւ փորձառութեանց համաձայն բաժանուած են զանազան աստիճաններու:

ՅՕԴ. 83 (ս.ը.կ. 200).- Զ.Մ.Ը.Մ.ի սկառուտութիւնը ունի հետեւեալ աստիճանները՝

## ՄՈԿԼԻ

Վոհմակի Պետ (Մետուա)  
Վոհմակի Փոխ-Պետ (Ռաբշա)  
Վոհմակի Փոխ-Պետ (Քաա)

## ԱՐԾՈՒԿ

Երամի Պետ (Աբելլա)  
Երամի Փոխ-Պետ (Պալու եւ Պաղերա)  
Վարիչ Վեցեակապետուհի  
Վեցեակապետուհի  
Փոխ-Վեցեակապետուհի

## ԳԱՅՆԻԿ

Վոհմակի Պետ (Աբելլա)  
Վոհմակի Փոխ-Պետ (Պալու եւ Պաղերա)  
Վարիչ Վեցեակապետ  
Վեցեակապետ  
Փոխ-Վեցեակապետ

## ԱՐԵՆՅՅ

Խմբապետուհի  
Փոխ-Խմբապետուհի  
Վարիչ Առաջնորդուհի  
Առաջնորդուհի  
Փոխ-Առաջնորդուհի

## ԱՐԻ

Խմբապետ  
Փոխ-Խմբապետ  
Վարիչ Առաջնորդ  
Առաջնորդ  
Փոխ-Առաջնորդ

## ՊԱՐՄԱՆՈՒԻ

Խմբապետուհի  
Փոխ-Խմբապետուհի  
Տասնապետուհի  
Փոխ-Տասնապետուհի

## ԵՐԵՑ

Խմբապետ  
Փոխ-Խմբապետ  
Տասնապետ  
Փոխ-Տասնապետ

Ծանօթ՝ (Ներքին կ.)

ա.- Իւրաքանչիւր աստիճան կը տրուի պատշաճ առիթով, հրապարակաւ, կամ պաշտօնական արարողութեամբ:

բ.- Սկառուտը կը ստանայ իր աստիճանը իրմէ աւելի գերադաս աստիճանաւորի կողմէ:

ՅՕԴ. 84 (ս.ը.կ. 201).- Յօդուած 83 (ս.ը.կ. 200)ով ճշդուած աստիճանաւորական կազմին նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները, իրաւասութիւնները եւ մարմիններու հետ յարաբերութիւնը իւրաքանչիւր շրջան կը տնօրինէ իր երկրի սկառուտական կանոններուն համաձայն: Այդ բոլորը պէտք է ամփոփուած ըլլան շրջանի Սկառուտական Ներքին Կանոնագիրին մէջ:

## Պայմաններ

Փայլիկական կամ սկառուտական աստիճանները ունենալու համար անհրաժեշտ է լրացնել հետեւեալ պայմանները:

Ա. Փոխ-Վեցեակապետի Պարագային

1.- Կ'առաջարկէ Վոհմակի (Երամի) Պետը, ապա Մասնաճիւղի Խմբապետի համաձայնութենէն ետք կը վաւերացուի Սկառուտական Խորհուրդին կողմէ:

**Բ. Վեցեակապետի Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Միաստոյի վկայական:

2.- Կ'առաջարկէ Վոհմակի (Երամի) Պետը, ապա Մասնաճիւղի հմբապետի համաձայնութենէն ետք կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**Գ. Վարիչ Վեցեակապետի Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Երկաստոյի վկայական:

2.- Կ'առաջարկէ Վոհմակի (Երամի) Պետը, ապա Մասնաճիւղի հմբապետի համաձայնութենէն ետք կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**Դ. Վոհմակի (Երամի) Փոխ-Պետի (Պաղիրա եւ Պալու) Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Երկրորդ Կարգի վկայական:

2.- Կ'առաջարկէ Վոհմակի (Երամի) Պետը, ապա Մասնաճիւղի հմբապետի համաձայնութենէն ետք կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**Ե. Վոհմակի (Երամի) Պետի (Աքելլա) Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Առաջին Կարգի վկայական:

2.- Կ'առաջարկէ Մասնաճիւղի հմբապետը, եւ կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**2. Փոխ-Առաջնորդի Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Նորընծայի վկայական:

2.- Կ'առաջարկէ հմբապետը, ապա Մասնաճիւղի հմբապետի համաձայնութենէն ետք կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**Ե. Առաջնորդի Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Նորընծայի վկայական:

2.- Կ'առաջարկէ հմբապետը, ապա Մասնաճիւղի հմբապետի համաձայնութենէն ետք կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**Ը. Վարիչ Առաջնորդի Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Երկրորդ Կարգի վկայական:

2.- Կ'առաջարկէ հմբապետը, ապա Մասնաճիւղի հմբապետի համաձայնութենէն ետք կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**Թ. Փոխ-հմբապետի Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Առաջին Կարգի վկայական:

2.- Կ'առաջարկէ Մասնաճիւղի հմբապետը, եւ կը վաւերացուի Սկառտական հորհուրդին կողմէ:

**ժ. հմբապետի Պարագային**

1.- Պետք է ստացած ըլլայ Վկայեալ Կարգի վկայական:

2.- Կ'առաջարկէ Մասնաճիւղի Սկառտական հորհուրդը, եւ կը վաւերացուի Շրջանային Սկառտական հորհուրդին կողմէ:

30Դ. 85.- Սկառտական աստիճանները ունին իրենց համապատասխան պաշտօններ: Պաշտօնը չափանիշ մըն է, որ կը տրուի որեւէ աստիճանատրի երբ ան՝

ա.- Ունի բաւական փորձառութիւն:

բ.- Կը ցուցաբերէ հետաքրքրութիւն, կարողութիւն, զոհողութիւն եւ

պարտաճանաչութիւն իր աշխատանքներուն մէջ:

գ.- Առնուազն 6 ամսուայ շարունակաբար գործօն սկառտ է իր մասնաճիւղի մէջ:

ՅՕԴ. 86.- Իւրաքանչիւր աստիճանաւոր արժանի է պաշտօնի երբ կը լրացնէ պատկան պաշտօնի պայմանները:

ա.- Փոխ-Առաջնորդ/ուհի կը հսկէ խմբակի մը գործունեութեան եւ կը փոխարինէ առաջնորդը՝ անոր բացակայութեան:

Կը տրուի այն արի/արեւոյշին որ՝

- Ունի Լորընծայի վկայական եւ փոխ առաջնորդի աստիճան
- Ցուցաբերած է որոշ նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

բ.- Առաջնորդ/ուհի պատասխանատուն է իր խմբակի ընդհանուր գործունեութեան:

Կը տրուի այն արի/արեւոյշին որ՝

- Առնուազն մէկ տարի Փոխ-Առաջնորդ/ուհի պաշտօն ունեցած է
- Ունի առաջնորդի աստիճան
- Ցուցաբերած է որոշ նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

գ.- Վարիչ Առաջնորդ/ուհի պատասխանատուն է երկու խմբակներու:

Կը տրուի այն արի/արեւոյշին որ՝

- Առնուազն մէկ տարի Առաջնորդ/ուհի պաշտօն ունեցած է
- Ունի Երկրորդ կարգի վկայական եւ վարիչ առաջնորդի աստիճան
- Լաւատեղեակ է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական ծրագիր-կանոնագրին
- Ցուցաբերած է որոշ նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

դ.- Փոխ-խմբապետ/ուհի կ'աջակցի խմբապետին եւ կը փոխարինէ զայն անոր բացակայութեան:

Կը տրուի այն արի/արեւոյշին որ՝

- Առնուազն մէկ տարի Վարիչ Առաջնորդ/ուհի պաշտօն ունեցած է
- Ունի Առաջին կարգի վկայական եւ փոխ խմբապետի աստիճան
- Կրած է պատասխանատու պաշտօններ մասնաճիւղի եւ կամ շրջանային սկաուտական գործունեութեան մէջ ու կատարած լաւագոյն կերպով
- Ցուցաբերած է որոշ նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

ե.- խմբապետ/ուհի պատասխանատուն է իր խումբին եւ կը հսկէ անոր գործունեութեան:

Կը տրուի այն արի/արեւոյշին որ՝

- Առնուազն մէկ տարի Փոխ-խմբապետ/ուհի պաշտօն ունեցած է
- Ունի Վկայեալ կարգի վկայական եւ խմբապետի աստիճան
- Կրած է պատասխանատու պաշտօններ մասնաճիւղի եւ կամ շրջանային սկաուտական գործունեութեան մէջ ու կատարած լաւագոյն կերպով

- Կարողութիւնը ունի ծրագրելու, կազմակերպելու եւ գործադրելու սկաուտական գործունեութիւններ

- Ցուցաբերած է որոշ նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

ՅՕԴ. 87.- Փոխ-Առաջնորդի/ուհիի պաշտօնը կ'առաջարկուի եւ կը հաստատուի մասնաճիւղի խմբապետութեան կողմէ, խորհրդակցութեամբ մասնաճիւղի խորհուրդի հետ:

ՅՕԴ. 88.- Առաջնորդի/ուհիի պաշտօնը կ'առաջարկուի եւ կը հաստատուի մասնաճիւղի խմբապետութեան կողմէ, խորհրդակցութեամբ մասնաճիւղի խորհուրդի հետ:

30Դ. 89.- Վարիչ Առաջնորդի/ուհիի պաշտօնը կ'առաջարկուի մասնաճիւղի համբապետութեան կողմէ կը հաստատուի մասնաճիւղի սկաուտական խորհուրդի կողմէ:

30Դ. 90.- Փոխ-համբապետի/ուհիի պաշտօնը կը տրուի մասնաճիւղի սկաուտական խորհուրդի կողմէ:

30Դ. 91.- համբապետի/ուհիի պաշտօնը կը տրուի մասնաճիւղի սկաուտական խորհուրդի կողմէ, եւ կը հաստատուի մասնաճիւղի վարչութեան կողմէ:

30Դ. 92.- Իւրաքանչիւր աստիճանաւոր Գայլիկ եւ Արծուիկ արժանի է պաշտօնի երբ կը լրացնէ պատկան պաշտօնի պայմանները:

ա.- Փոխ-Վեցեակապետ/ուհի կը փոխարինէ Վեցեակապետը՝ անոր բացակայութեան: Կը տրուի այն գայլիկին կամ արծուիկին որ՝

- Կատարած է իր խոստումը
- Առնուազն 6 ամիս մասնակցած է Վոհմակի եւ կամ Երամի յայտագրերուն
- Ունի Փոխ-Վեցեակապետ աստիճան
- Ցուցաբերած է որոշ Նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

բ.- Վեցեակապետ/ուհի կը հսկէ մէկ Վեցեակի գործունեութեան:

Կը տրուի այն գայլիկին կամ արծուիկին որ՝

- Առնուազն 6 ամիս ստացած է լիօրէն կատարած է Փոխ-Վեցեակապետ/ուհի պաշտօնի պարտականութիւնները
- Ունի Միաստղ կարգի վկայական եւ Վեցեակապետ աստիճան
- Ցուցաբերած է որոշ Նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

գ.- Վարիչ Վեցեակապետ/ուհի կը հսկէ երկու Վեցեակներու գործունեութեան:

Կը տրուի այն գայլիկին կամ արծուիկին որ՝

- Առնուազն 6 ամիս վարած է Վեցեակապետ/ուհի պաշտօնը
- Ունի Երկաստղ կարգի վկայական եւ Վարիչ Վեցեակապետ աստիճան
- Մասնակցած է Վոհմակի յայտագրերուն պարտաճանաչութեամբ
- Ցուցաբերած է որոշ Նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

դ.- Վոհմակի/Երամի փոխ պետ, 2 հոգի մէկ Պալու մէկ Պաղիրա: Պաղիրան պատասեանատու է Վոհմակի խաղերուն, իսկ Պալուն գիտելիքներու ուսուցման:

Կը տրուի այն արի/արեւոյշին որ՝

- Լաւատեղեակ է գայլիկական եւ արծուիկական գործունեութեան
- Ունի Երկորդր կարգի վկայական եւ Պալուի կամ Պաղիրայի աստիճան
- Ցուցաբերած է որոշ Նկատելի ղեկավարական ձիրք
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

ե.- Վոհմակի կամ Երամի Պետ, կը ստանայ Աքելլա Կոչում, պատասխանատուն է իր վոհմակին եւ կը հսկէ անոր գործունեութեան:

Կը տրուի այն արի/արեւոյշին որ՝

- Կը տիրապետէ Գայլիկ, Արծուիկներու գիտելիքներուն
- Առնուազն 6 ամիս վարած Վոհմակի/Երամի փոխ պետի պաշտօն
- Ունի Առաջին կարգի վկայական եւ Աքելլայի աստիճան
- Ցուցաբերած է աչքառու ղեկավարական ձիրք եւ շնորհք
- Ցուցաբերած գնահատելի վարուելակերպ դէպի մանուկներ
- Կը լրացնէ Յօդուած 85-ի պայմանները

30Դ. 93.-

ա.- Փոխ-Վեցակապետի, Վեցակապետի եւ Վարիչ Վեցակապետի պաշտոնները կ'առաջարկուին, միաւորի կամ միաւորներ չըլլալու պարագային, մասնաճիւղի խմբակապետութեան կողմէ եւ կը հաստատուին Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդի կողմէ:

բ.- Երամի/Վոհմակի պետի եւ փոխ պետի պաշտոնները կ'առաջարկուին խմբակապետութեան կողմէ եւ կը հաստատուին Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդի կողմէ:

30Դ. 94.- Երեցներու եւ Պարմանուհիներու փաղանգներու պաշտոնները կ'առաջարկուին փաղանգի խմբակապետին կողմէ, եւ կը հաստատուին Մասնաճիւղի Սկառուական Խորհուրդի կողմէ:

Ծանօթ.- Երեցներու եւ Պարմանուհիներու խմբակապետի, փոխ խմբակապետի, Տասնակապետի, եւ փոխ Տասնակապետի պայմանները նման են Արի/Արեւոյշներու խմբակապետի, փոխ խմբակապետի, Վարիչ Առաջնորդի, եւ Առաջնորդի պայմաններուն:

30Դ. 95 (ս.ը.կ. 202).- Սկառուական Աստիճանները մնայուն հանգամանք ունին:

30Դ. 96 (ս.ը.կ. 203).- Աստիճանը տիտղոս մըն է միայն եւ եւթակային իրաւական պատասխանատուութիւն չի տար:

30Դ. 97 (ս.ը.կ. 204).- Աստիճանաւոր մը իր պատասխանատուութիւնները կը ստանայ այն ատեն միայն, երբ կ'ունենայ նաեւ համապատասխան պաշտօն:

30Դ. 98 (ս.ը.կ. 205).- Սկառու աստիճանաւորը կը գործադրէ իրմէ գերադաս գործօն աստիճանաւորին կամ պաշտօնի վրայ եղող սկառու պատասխանատուին իրահանգները:

30Դ. 99 (ս.ը.կ. 206).- Ժողովական որոշումները սկառուական շարքերուն կը հասնին նուիրապետական կարգով:

## ՍԿԱՌՏԱԿԱՆ ԾԱՐՔԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

30Դ. 100 (ս.ը.կ. 207).- Բ.Մ.Ը.Մ.ի Սկառուութիւնը կը բաղկանայ խումբերէ, որոնց կառոյցը հետեւեալն է՝

Սկառուական բաժանմունքներն են՝

- Մոկլիներու վոհմակ - երամ
- Գայլիկական վոհմակ - Արծուիկներու երամ
- Արիներու խումբ - Արեւոյշներու խումբ
- Երեցական փաղանգ - Պարմանուհիներու փաղանգ

### Ա.- Մոկլիներու խմբաւորում (երկսեռ)

- 1.- Մոկլիները կը կազմեն վոհմակը:
- 2.- Վոհմակը կը բաղկանայ չորս հնգեակներէ:
- 3.- Գինգ մոկլիներ կը կազմեն հնգեակը:
- 4.- Իւրաքանչիւր վոհմակ նախընտրաբար կ'ունենայ չորս պատասխանատու:
- 5.- Վոհմակը կ'ունենայ վոհմակի պետ (մոկլիի ծնողն է՝ Մետուա) եւ երկու փոխ-պետեր (խաղերու եւ գիտելիքներու պատասխանատու՝ Ռակշա մայր գայլը եւ Քասա՝ իմաստուն օձը):

- 6.- Վոհմակը կ'ունենայ առաւելագոյնը 20 անդամ:

**Բ.- Գայլիկական բաժանմունք**

- 1.- Գայլիկները կը կազմեն վոհմակը:
  - 2.- Վոհմակը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
  - 3.- Վեց գայլիկներ կը կազմեն վեցեակը:
  - 4.- Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետ եւ վեցեակապետ մը:
- Անոնք կը վարեն վեցեակի գործունեութիւնը:
- 5.- Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վեցեակապետ:
  - 6.- Վոհմակը կ'ունենայ վոհմակի պետ (ուսուցումի պատասխանատու՝ Աբելլա) եւ վոհմակի երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու՝ Պալու եւ Պաղերա):
  - 7.- Վոհմակը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
  - 8.- Վոհմակը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

**Գ.- Արծուիկներու բաժանմունք**

- 1.- Արծուիկները կը կազմեն երամը:
  - 2.- Երամը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
  - 3.- Վեց արծուիկներ կը կազմեն վեցեակը:
  - 4.- Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետուհի եւ վեցեակապետուհի մը:
- Անոնք կը վարեն վեցեակի գործունեութիւնը:
- 5.- Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վեցեակապետուհի:
  - 6.- Երամը կ'ունենայ երամի պետ (ուսուցումի պատասխանատու՝ Աբելլա), եւ երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու՝ Պալու եւ Պաղերա)
  - 7.- Երամը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
  - 8.- Երամը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

**Դ.- Արիներու կամ Արենոյշներու բաժանմունք:**

- 1.- Արիները կամ արենոյշները կը կազմեն խումբը:
  - 2.- Խումբը կը բաղկանայ չորս խմբակներէ:
  - 3.- Առաւելագոյնը 8 արիներ կամ արենոյշներ կը կազմեն խմբակը:
  - 4.- Առաջնորդ/Առաջնորդուհի մը եւ փոխ-առաջնորդ/առաջնորդուհի մը կը վարեն խմբակը:
- Երկու խմբակներ կ'ունենան վարիչ առաջնորդ/առաջնորդուհի մը:
- 6.- Խումբը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուհի եւ խմբապետ/խմբապետուհի մը:
  - 7.- Խումբը կ'ունենայ առաւելագոյնը 45 անդամ:
  - 8.- Խումբը կը զատորոշուի թիւով, իսկ խմբակը՝ կենդանիի անունով:

**Ե.- Երեցներու կամ Պարմանուհիներու բաժանմունք**

- 1.- Երեցները կամ պարմանուհիները կը կազմեն փաղանգը:
- 2.- Տարւ երեցներ կամ պարմանուհիներ կը կազմեն տասնեակը:
- 3.- Տասնեակը կը վարեն փոխ-տասնապետ/փոխ-տասնապետուհի եւ տասնապետ/տասնապետուհի մը:
- 4.- Փաղանգը կ'ունենայ առաւելագոյնը 30 անդամ:
- 5.- Փաղանգը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուհի մը եւ տասնապետ/տասնապետուհի մը:
- 6.- Փաղանգը եւ տասնեակը՝ կ'ունենայ պատմական անուն:

Ծանօթ.- Վերոյիշեալ դասաւորումները ընդհանուր բնոյթ ունին: Իւրաքանչիւր շրջան կը պատշաճի իր երկրի կանոններուն՝ մեկնաբանուած շրջանի Ներքին Կանոնագիրով:

ՅՕԴ. 101 (ս.ը.կ. 208).- Ս.ը.կ. Յօդուած 207-ով սահմանուած կառոյցը կը կազմէ սկաւտական միաւորը:

ՅՕԴ. 102 (ս.ը.կ. 209).- Նոր միաւոր մը կարելի է կազմել երկու ձեւով՝

ա) երկու կամ երեք սկաուտական բաժանմունքներէ (օրինակ՝ վոհմակ, խումբ, փաղանգ):

բ) Նոյն բաժանմունքէն նուազագոյնը երկու խմբաւորումներէ (օրինակ՝ գայլիկական երկու վոհմակ):

ՅՕԴ. 103 (ս.ը.կ. 210).- Հ.Մ.Ը.Մ.ի անունով սկաուտական բաժանմունքներ կազմելու համար հարկ է ունենալ մասնաճիւղի Վարչութեան կամ անոր Նշանակած Սկաուտական Խորհուրդի արտօնութիւնը եւ ենթակայ ըլլալ անոր որոշումներուն:

## ԿԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ-ՊԱՏԺԱԿԱՆ

**(Տեսնել նաեւ Միութեան Ընդհանուր Ծրագիր Կանոնագրիի ՅՕԴ. 130-Էն 143, Էջ 36-Էն 39)**

ՅՕԴ. 104 (ս.ը.կ. 211).- Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր Ծրագիր-Կանոնագրին եւ ոգիին, սկաուտական սկզբունքներուն եւ Ծրագիր-Կանոնագրին դէմ գործող սկաուտական շարքերու իւրաքանչիւր անդամ կ'ենթարկուի իր գործած յանցանքին համապատասխան պատիժի:

ՅՕԴ. 105 (ս.ը.կ. 212).- Կարգապահական տեսակէտով, սկաուտական շարքերու ամէն անդամ պատասխանատու է այն մարմին կամ ժողովին, որուն իրաւասութեան դէմ յանցանք գործած է:

ՅՕԴ. 106 (ս.ը.կ. 213).- Պատժական ամէն որոշում պէտք է առնուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

Ծանօթ՝ ա) Բացի սկաուտական պատիժներու առաջին երեք կէտերէն (տե՛ս ս.ը.կ. Յօդ. 221), որոնք կրնան տրուիլ նաեւ խումբի պատասխանատուին կողմէ (դիտողութիւն, յանդիմանութիւն, խումբի գործունէութեան օգտակար եղող աշխատանքներու յաւելեալ կատարում):

բ) Պատժական տնօրինումներու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

ՅՕԴ. 107 (ս.ը.կ. 214).- Կարգապահական պատիժներու դէմ կարելի է բողոքել՝

ա) Պատժական որոշումի հաղորդումէն մինչեւ 2 ամիս:

բ) Պատժական որոշումը տուած մարմինին անմիջականօրէն գերադաս մարմինին:

ՅՕԴ. 108 (ս.ը.կ. 215).- Դատավճիռի մը դէմ մամուլի միջոցով կամ հանրային բեմերէ բողոքողը կը գրուի իր դատը գերադաս ժողովին կամ մարմինին ներկայացնելու իրաւունքէն:

ՅՕԴ. 109 (ս.ը.կ. 216).- Դատավճիռի մը դէմ բողոքը կը ներկայացուի պատիժը որոշող մարմինին կամ ժողովին միջոցով:

ՅՕԴ. 110 (ս.ը.կ. 217).- Բողոքառու մարմինը կամ ժողովը՝

ա) Հարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յատուկ դատական ատենակի մը:

բ) Պարտաւոր է լսել պատիժը սահմանած մարմինը եւ պատժուած անդամը:

գ) Անոր որոշումները վերջնական են:

ՅՕԴ. 111 (ս.ը.կ. 218).- Բոլոր պատիժները ենթակային կը հաղորդուին գրաւոր եւ նուիրապետական կարգով:



ՅՕԴ. 112 (ս.ը.կ. 219).- Սկառուտական շարքերու աստիճանաւորը կը դատուի իր պաշտօնը վաւերացուցած մարմինին կամ ժողովին կողմէ:

ՅՕԴ. 113 (ս.ը.կ. 220).- Յ.Մ.Ը.Մ.ի սկառուտութիւնը ունի երկու ձեւի պատիժներ՝  
**Ա.- Սկառուտական**  
**Բ.- Միութենական**

ՅՕԴ. 114 (ս.ը.կ. 221).- Սկառուտական պատիժներն են՝

1) **Դիտողութիւն** (բերանացի կամ գրաւոր):

2) **Ցանդիմանութիւն** (բերանացի կամ գրաւոր):

3) **Խումբի գործունեութեան օգտակար եղող աշխատանքներու յաւելեալ կատարում** (ջուր կրել, փայտ հաւաքել, բանակատեղին եւ սկառուտական սենեակը մաքրել ու նման այլազան աշխատանքներ, որոնք կրնան օգտակար ըլլալ խումբի գործունեութեան):

Ծանօթ՝ Այս պատիժները (1-3) կը տնօրինուին պատասխանատու աստիճանաւորին կամ մարմինի կողմէ:

4) **Փողկապ կրելու իրաւունքէն զրկում**. Սկառուտը կը զրկուի փողկապ կրելու իրաւունքէն առաւելագոյնը չորս շաբաթ: Այս պատիժը կը նշանակէ թէ զրկուած է սկառուտական բոլոր իրաւունքներէն, բայց զերծ չէ կացուցուած իր պարտաւորութիւններէն:

5) **Կախակայում սկառուտական աշխատանքներէ**. Սկառուտը կը զրկուի սկառուտական աշխատանքներուն մասնակցելէ, բայց կը կատարէ իրեն տրուած բոլոր պարտականութիւնները: Այս պատիժը կը տրուի առաւելագոյնը չորս շաբաթուան համար:

6) **Աստիճանագրկում/պաշտօնագրկում**. Երբ աստիճանաւորը իր կոչումին վայել բարձրութեան վրայ չի գտնուիր վարչական անկարողութեան, բարոյական սայթաքումի եւ այլ պատճառներով, իրեն վստահուած աստիճանը/պաշտօնը ետ կ'առնուի: Նման պատիժ մը կը տնօրինուի աստիճանաւորին գործունեութիւնը հակակշռող մարմինին կամ ժողովին կողմէ:

7) **Դադրեցում սկառուտական շարքերէն**. Յաճախակի պատիժներու ենթարկուած սկառուտը, որ իր ընթացքով կը խանգարէ խումբին աշխատանքները, կը դադրեցուի սկառուտական շարքերէն:

8) **Միութենական շարքերէն հեռացումի առաջարկ**. Միութեան գոյքը իւրացնող, նիւթական եւ բարոյական սայթաքումներ ունեցած սկառուտին համար նուիրապետական կարգերով կրնայ պահանջուիլ Միութեան շարքերէն հեռացում: Այս պահանջը կրնայ բանաձեւել Շրջանային Սկառուտական Խորհուրդը միայն, քննելէ ետք ենթակային պարագան եւ լսելէ ետք անոր բացատրութիւնները: Պատիժը կը սահմանուի Շրջանային Վարչութեան կողմէ, լսելէ ետք Շրջանային Սկառուտական Խորհուրդի գրաւոր զեկուցումը եւ ենթակային գրաւոր բացատրութիւնները:

ՅՕԴ. 115 (ս.ը.կ. 222).- Վերոյիշեալ պատիժները (բացի ս.ը.կ. Յօդ. 221 - ութերորդէն) սկառուտական են եւ սկառուտը չեն զրկեր Միութենական այլ գործունեութենէ: Անոնք կը վերաբերին 18-էն վար տարիք ունեցող սկառուտներուն:

ՅՕԴ. 116 (ս.ը.կ. 223).- Միութենական պատիժներու մեկնաբանութիւնը կը կատարուի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի տրամադրութեանց համաձայն:

ՅՕԴ. 117 (ս.ը.կ. 224).- Միութենական պատիժները կը տնօրինուին Մասնաճիւղի, Շրջանային կամ Կեդրոնական Վարչութեանց կողմէ, անոնց նշանակած սկառուտական մարմիններուն առաջարկով:

## ՏԱՐԱԶՆԵՐ ԵՒ ԳՈՅՔԵՐ

ՅՕԴ. 118 (ս.ը.կ. 225).- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն տարազները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը:

Երբ երկիր մը Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտները պարտաւորուած են կրելու տեղւոյն սկաուտական տարազները, հնարաւորութեան սահմաններուն մէջ պետք է կրեն Հ.Մ.Ը.Մ.ի գօտին, Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը՝ գլխարկին վրայ եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շուշանածաղիկը՝ ձախ կուրծքին վրայ եւ եռագոյն երիզ մը աջ գրպանին վրե՛ն:

ՅՕԴ. 119 (ս.ը.կ. 226).- Սկաուտը իր տարազին վրայ կրնայ կրել սկաուտական Ներքին Կանոնագրով արտօնուած նշաններ:

ՅՕԴ. 120.- Սկաուտը իր տարազին վրայ կրնայ կրել Շրջանային Սկաուտական Խորհուրդի կողմէ արտօնուած նշաններ:

ՅՕԴ. 121 (ս.ը.կ. 227).- Սկաուտական խումբերը կ'ունենան իրենց յատուկ կազմածներն ու գոյքերը, որոնք Միութեան սեփականութիւնն են:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՅՕԴ. 122 (ս.ը.կ. 228).- Իւրաքանչիւր շրջան կ'ունենայ իր Ներքին Սկաուտական Կանոնագրութիւնը, որ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի հաւանութենէն ետք, կը վաւերացուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

ՅՕԴ. 123 (ս.ը.կ. 229).- Շրջաններու Ներքին Սկաուտական Կանոնագրութիւնները կրնան պատշաճեցուած ըլլալ շրջանի կամ երկրի սկաուտական ընդհանուր կանոններուն: Շրջան մը, ուր Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերը անհրաժեշտութիւն չեն զգար կապուելու իրենց երկրի սկաուտական շարքերուն, կրնան իրենց յատուկ Ներքին կազմակերպութիւնը ունենալ միշտ յարգելով Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Կանոնագրութեան սկզբունքները եւ տրամադրութիւնները:

ՅՕԴ. 124 (ս.ը.կ. 230).- Շրջաններու Ներքին Կանոնագրութեանց մէջ անհրաժեշտ է յստակօրէն ճշդել՝

ա) Սկաուտական շարքերու ընդունման պայմանները:

բ) Չանագան բաժանմունքներու տարիքները եւ փոխանցումներու պայմանները:

գ) Սկաուտական ժողովներու եւ վարչական մարմիններու յարաբերութիւնները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւններու սահմանները:

դ) Աստիճաններու տուչութեան պայմանները եւ արարողութիւնները:

ՅՕԴ. 125 (ս.ը.կ. 231).-

ա) Մասնաճիւղէ-մասնաճիւղ անդամի մը փոխանցումը կը կատարուի մասնաճիւղի վարչութեան արտօնութեամբ, Շրջանային Սկաուտական Խորհուրդի գիտակցութեամբ եւ Շրջանային Վարչութեան վաւերացումով:

բ) Շրջանէ-շրջան տեղափոխութեան պարագային, ենթական պետք է ունենայ իր պատկանած շրջանի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան փոխանցագիրը:

# ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՅՕԴ. 126.- Ընդհանուր բանակումներու նպատակն է՝

1.- Ի մի հաւաքել Յ.Մ.Ը.Մ.ի զանազան մասնաճիւղերու արիները, արեւոյշները, գայլիկները, արծուիկները, երեցները եւ պարմանուհիները:

2.- Տալ ազգային եւ միութենական դաստիարակութիւն եւ առիթ ստեղծել փոխադարձ ծանօթացման:

ՅՕԴ. 127.- Շրջանային բանակումներուն կրնան մասնակցիլ հետեւեալ պայմանները լրացնող սկաուտները.-

ա.- Ըլլայ 7 տարեկան:

բ.- Առնուազն 6 ամուսայ գործօն սկաուտ:

գ.- Ունենան քաջատող վիճակ:

ՅՕԴ. 128.- Շրջանային բանակումին կարենալ մասնակցելու համար թեկնածուն կը ներկայացնէ դիմումագիր, տրամադրուած Շրջանային Սկաուտական Խորհուրդի կողմէ:

ՅՕԴ. 129.- Շրջանային բանակումի խմբապետական կազմը կը նշանակուի Շրջանային Սկաուտական Խորհուրդին կողմէ, Շրջանային Վարչութեան հաւանութեամբ:

ՅՕԴ. 130.- Շրջանային բանակումի աւարտին խմբապետական կազմը պարտի պատրաստել տեղեկագիր, եւ ներկայացնէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

# **ՀԱՄԱ-Յ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ** **ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ**

## **ՆՊԱՏԱԿ**

Ընդհանուր բանակումներու նպատակն է՝

- 1) Ի մի հաւաքել Հ.Մ.Ը.Մ.ի զանազան շրջաններու արիւները, արեւոյշները, երեցներն եւ պարմանուհիները:
- 2) Տալ ազգային եւ միութենական դաստիարակութիւն եւ աղիթ ստեղծել փոխադարձ ծանօթացման:
- 3) Սատարել Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան միջազգային ծանօթացման:

## **ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ՅՕԴ. 131 (ս.ը.կ. 232).- Ընդհանուր բանակումներուն կրնան մասնակցիլ հետեւեալ պայմանները լրացնող արիւները, արեւոյշները, երեցներն եւ պարմանուհիները՝

- ա) Ամբողջացուցած ըլլան 14 տարիքը:
- բ) 10 օրեր սկաուտական բանակումի մասնակցած ըլլան:
- գ) Ունենան Բ. կարգ (արիւներ-արեւոյշներ) եւ նախապատրաստական շրջանի կարգ (երեցներ-պարմանուհիներ):
- դ) Ունենան քաջառողջ վիճակ:

ՅՕԴ. 132 (ս.ը.կ. 233).- Ընդհանուր բանակումին կարեւալ մասնակցելու համար թեկնածուն կը ներկայացնէ դիմումագիր, տրամադրուած Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ Դիմումագիրին մէջ կ'արձանագրուին ենթակային՝

- ա) անունն ու մականունը,
- բ) ծննդեան թուականը,
- գ) հայատակութիւնը,
- դ) անցագրի (passport) թիւը եւ թուականը,
- ե) պատկանած շրջանին եւ մասնաճիւղին անունը,
- զ) սկաուտական կարգը, աստիճանը եւ պաշտօնը,
- է) մասնակցած բանակումներու թուականը եւ վայրը,
- ը) հասցէն եւ հեռաձայնի թիւերը,
- թ) բժշկական հաստատագիրը:

## **ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ**

ՅՕԴ. 133 (ս.ը.կ. 234).- Իւրաքանչիւր շրջանի պատուիրակութիւն կը բաժնուի խմբակներու/տասնեակներու եւ խումբերու/փաղանգներու:

- ա) 5-7 արիւներ/արեւոյշներ կը կազմեն մէկ խմբակ:
- բ) 8-10 երեցներ/պարմանուհիներ կը կազմեն մէկ տասնեակ:
- գ) 2-4 խմբակներ կը կազմեն արիւներու/արեւոյշներու խումբ:
- դ) 2-4 տասնեակներ կը կազմեն երեցներու/պարմանուհիներու փաղանգ:

ե) Պատուիրակութիւններուն ընկերակցող պատասխանատու աստիճանաւորներուն թիւը կը ճշդէ Կեդրոնական Վարչութիւնը՝ մասնակցողներու թիւին համեմատութեամբ:

զ) Պատուիրակութիւն մը կը մասնակցի նուազագոյնը մէկ խմբակով/տասնեակով:

է) Իւրաքանչիւր պատուիրակութիւն կ'ունենայ մէկ գլխաւոր պատասխանատու:

Ծանօթ՝ Ընդհանուր բանակումին կրնան մասնակցիլ Կեդրոնական Վարչութեան ճշդած թիւէն անէլի աստիճանաւորներ (խմբապետ/ուհի, Փոխ-խմբապետ/ուհի): Այդ աստիճանաւորները կը մնան բանակումի ընդհանուր խմբապետութեան տրամադրութեան տակ եւ կը ստանձնեն անոր ճշդած պարտականութիւնները:

30Գ. 134.- Ընդհանուր բանակումին մասնակցող պատուիրակութեան խմբապետական կազմը կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ:

30Գ. 135.- Ընդհանուր բանակումի աւարտին պատուիրակութեան խմբապետական կազմը պարտի պատրաստել նիւթաբարոյական տեղեկագիր, եւ ներկայացնէ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաւտական Խորհուրդին միջոցաւ:

## **ԲԱՆԱԿՈՒՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ**

30Գ. 136 (ս.ը.կ. 235).- Ընդհանուր բանակումը կ'ունենայ Գործադիր Մարմին մը՝ բաղկացած 5-9 անդամներէ, որոնք կը նշանակուին Յ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Ծանօթ՝

ա.- Գործադիր Մարմինը կը բաղկանայ.

- Ընդհանուր խմբապետ/խմբապետուհիէ

- Փոխ խմբապետ

- Փոխ խմբապետուհիէ

- Կազմակերպչական- դաստիարակչական խմբապետ/խմբապետուհի

- Ցարաբերական խմբապետ/խմբապետուհի

բ.- Ի պահանջեալ հարկին, կարելի է ճշդել յաւելեալ պաշտօններ:

գ.- Գործադիր Մարմինի անդամներուն պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները գրաւոր ձեւով կը ճշդուին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

30Գ. 137 (ս.ը.կ. 236).- Գործադիր Մարմինը կը հսկէ ընդհանուր բանակումի աշխատանքներու գործադրութեան:

30Գ. 138 (ս.ը.կ. 237).- Գործադիր Մարմինին կ'օժանդակեն բանակումին մասնակցող պատուիրակութիւնները գլխաւորող խմբապետներն ու խմբապետուհիները, որոնց կը տրուի պաշտօն, ըստ բանակավայրի կարիքներուն, ճշդուած Ընդհանուր խմբապետին կողմէ:

30Գ. 139 (ս.ը.կ. 238).- Ընդհանուր բանակումը կ'ունենայ օրուան հերթապահ մը, որ կը գործադրէ օրուան յայտագիրը: Օրուան հերթապահը կը ճշդուի ընդհանուր բանակումի եռանդամ խմբապետական կազմին կողմէ:

30Գ. 140 (ս.ը.կ. 239).- Ընդհանուր բանակումը կը կազմակերպուի չորս տարին անգամ մը: Կը տեսէ 10էն 15 օր: Բանակումի պաշտօնական բաժինը կը տեսէ 8էն 10 օր:

ՅՕԴ. 141 (ս.ը.կ. 240).- Գործադիր Մարմինը կը պատրաստէ ընդհանուր բանակումի թեման եւ աշխատանքները, որոնք Կեդրոնական Վարչութեան վաւերացումէն ետք, վերջնականացած յայտագիրը կը յղուի շրջաններուն Նախընտրաբար բանակումի թուականէն մէկ տարի կամ ամէնէն ուշը վեց ամիս առաջ:

ՅՕԴ. 142 (ս.ը.կ. 241).- Բանակումը կ'ունենայ խորհրդանիշ, քայլերգ եւ դրօշակ, պատրաստուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## **ՍԿՈՒՏՆԵՐՈՒ ԲԱԺՎՆՄՈՒՆՔՆԵՐ**

ՅՕԴ. 143 (ս.ը.կ. 242).- Ընդհանուր բանակումին մասնակցող արիւները, արեւոյշները, երեցները եւ պարմանուհիները Նախընտրաբար կը համախմբուին իրարմէ անջատ 4 բանակատեղիներու մէջ: Կ'ունենան ներքին աշխատանքներու յայտագիր, որ պէտք չէ խանգարէ Գործադիր Մարմինի ճշդած ընդհանուր աշխատանքները:

ՅՕԴ. 144 (ս.ը.կ. 243).- Իւրաքանչիւր բանակատեղի կ'ունենայ իր խմբապետական կազմը, որուն իրաւասութիւնները եւ պարտաւորութիւնները կը ճշդէ բանակումի Գործադիր Մարմինը:

## **ԲԱՆԱԿՎԱՅՐԸ**

ՅՕԴ. 145 (ս.ը.կ. 244).- Ընդհանուր բանակումի բանակավայրը կը ճշդէ Յ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

Բանակումի թուականէն մէկ տարի առաջ որոշուած վայրը (շրջան-երկիր) կը փոխանցուի շրջաններուն:

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

ՅՕԴ. 146 (ս.ը.կ. 245).- Կեդրոնական Վարչութիւնը մօտէն կը հետեւի բանակումի բոլոր աշխատանքներուն: Բանակումէն ետք կը կազմէ թղթածրար, ուր ամփոփուած կ'ըլլան բանակումին հետ կապուած բոլոր տեղեկութիւնները (ծրագիր, Նախահաշիւ, տեղեկագիր, Նիւթական հաշուեկշիռ, Նկարագրականներ, վաւերաթուղթեր, եւայլն):